

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ

30 մարտի 2006 թվականի N 94
7 օգոստոսի 2007 թվականի N 130
28 հուլիսի 2011 թվականի N 164
13 հունիսի 2012 թվականի N124

26 օգոստոսի 2004 թվականի N 14
ք. Ստեփանակերտ

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՌԵՋԵՐՎՈՒՄ
ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ԿԱԴՐԵՐԻ ՌԵՋԵՐՎԻՑ ՀԱՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Լեռնային
Ղարաքաղի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասով Լեռնային
Ղարաքաղի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդը

ռ ր ո շ ու մ է :

Սահմանել քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցելու
և կադրերի ռեզերվից հանելու կարգը (հավելված):

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Բ. Ս.ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Կ Ա Ր Գ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՌԵՋԵՐՎՈՒՄ
ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ԿԱԴՐԵՐԻ ՌԵՋԵՐՎԻՑ ՀԱՆՇԵԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական ծառայողներին և «Քաղաքացիական ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 21-րդ հոդվածի 3-րդ կետում նշված անձանց քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում (այսուհետ՝ կադրերի ռեզերվ) գրանցելու և կադրերի ռեզերվից հանելու հետ կապված հարաբերությունները:

2. Կադրերի ռեզերվը Օրենքով սահմանված կարգով քաղաքացիական ծառայության պաշտոններ չգրադնցող քաղաքացիական ծառայողների և Օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ կետով նշված անձանց հանրույթ է:

3. Կադրերի ռեզերվի տեսակներն են՝ կադրերի կարճաժամկետ ռեզերվ և կադրերի երկարաժամկետ ռեզերվ:

4. Կադրերի կարճաժամկետ ռեզերվում միանգամյա գտնվելու առավելագույն ժամկետը վեց ամիս է, իսկ կադրերի երկարաժամկետ ռեզերվում՝ մեկ տարի, բայց ոչ ավելի քան կադրերի ռեզերվում գրանցված անձի 65 տարին լրանալը:

5. Կադրերի ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողի վարձատրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով:

II. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԴՐԵՐԻ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ
ՌԵՋԵՐՎ

6. Կադրերի կարճաժամկետ ռեզերվում գրանցվում են՝
ա) հաստիքների կրճատման, համապատասխան մարմնի լուծարման հիմքերով քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատված անձինք.

բ) պաշտոնավարման ժամկետը լրանալու հիմքով պաշտոնից ազատված քաղաքացիական ծառայող համարվող աշխատակազմերի ղեկավարները.

գ) Ուժը կորցրած է ճանաչվել.

դ) Օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում քաղաքացիական ծառայության պաշտոնում չնշանակված անձինք:

7. Սույն կարգի 6-րդ կետում նշված կադրերի կարճաժամկետ ռեզերվում գրանցելու հիմքերի առկայության դեպքում Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետում նշված համապատասխան մարմնի (այսուհետ՝ համապատասխան մարմին) աշխատակազմի ղեկավարը երեք աշխատանքային օրվա ընթացքում Խորհուրդ է ուղարկում քաղաքացիական ծառայողի անձնական գործը՝ կադրերի կարճաժամկետ ռեզերվում գրանցումը հիմնավորող փաստաթղթի պատճենի և կադրերի կարճաժամկետ ռեզերվում գրանցվելու վերաբերյալ տվյալ քաղաքացիական ծառայողի դիմումի հետ միասին:

8. Կադրերի կարճաժամկետ ռեզերվում գրանցելու մասին սույն կարգի 13-րդ կետում նշված Խորհրդի որոշման հիման վրա կադրերի կարճաժամկետ ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողի տվյալները ընդգրկվում են քաղաքացիական ծառայողների գրանցամատյանի մեջ:

9. Կադրերի կարճաժամկետ ռեզերվից քաղաքացիական ծառայողին հանելու հիմքերն են՝

ա) անձնական դիմումը.

բ) ուժը կորցրած ճանաչել.

գ) քաղաքական, հայեցողական, բացառությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդակցականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների քաղաքացիական, ինչպես նաև քաղաքացիական ծառայության պաշտոններում ընտրվելը կամ նշանակվելը.

դ) սույն կարգի խախտմամբ կադրերի կարճաժամկետ ռեզերվում գրանցվելը.

ե) Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերով, ինչպես նաև 2-րդ կետով նախատեսված սահմանափակումները չպահպանելը.

զ) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելը.

է) օրինական ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը.

ը) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելը.

թ) դատական կարգով քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկվելը.

ժ) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով հիվանդանալը, ինչը քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել քաղաքացիական ծառայողի ծառայողական պարտականությունների կատարմանը և լիազորությունների իրականացմանը.

ժա) կադրերի կարճաժամկետ ռեզերվում միանգամյա գտնվելու առավելագույն ժամկետը լրանալը.

ժբ) 65 տարին լրանալը.

ժգ) Ուժը կորցրած է ճանաչվել.

ժդ) Ուժը կորցրած է ճանաչվել.

ժե) ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելը.

ժզ) Օրենքով սահմանված այլ հիմքերը:

III. ՔԱՂԱՔԱՑԻ ԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԴՐԵՐԻ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՈՒՋԵՐԿ

10. Կադրերի երկարաժամկետ ռեզերվում գրանցվում են՝

ա) սույն կարգի 4-րդ կետում նշված կադրերի կարճաժամկետ ռեզերվում միանգամյա գտնվելու առավելագույն ժամկետը լրացած անձինք.

բ) ուժը կորցրած է ճանաչվել.

գ) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացված մրցույթում օրենքով սահմանված կարգով հաղթող ճանաչված, սակայն պաշտոնի չնշանակված անձինք.

դ) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով մեկ տարվա ընթացքում ավելի քան վեց ամիս աշխատանքի չներկայանալու (չհաշված հղիության և ծննդաբերության արձակուրդը) հիմքով քաղաքացիական ծառայության պաշտոնից ազատված անձինք:

11. Սույն կարգի 10-րդ կետով սահմանված կադրերի երկարաժամկետ ռեզերվում գրանցելու հիմքերի առկայության դեպքում գրանցման ենթակա անձը այդ հիմքի ի հայտ գալու օրվանից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում դիմում է

Խորհուրդ, կադրերի երկարաժամկետ ռեզերվում գրանցելու համար՝ լրացնելով քաղաքացիական ծառայողի համար նախատեսված անձնական թերթիկ և ներկայացնելով անձնագրի, կրթությունը հավաստող փաստաթղթի, աշխատանքային գրքույկի պատճենները, ինչպես նաև երկու լուսանկար:

12. Կադրերի երկարաժամկետ ռեզերվից հանելու հիմքերն են՝

ա) սույն կարգի 9-րդ կետի «ա», «գ-ժ», «ժբ» և «ժգ» ենթակետերում նշված հիմքերը.

բ) սույն կարգի խախտմամբ կադրերի երկարաժամկետ ռեզերվում գրանցվելը.

գ) կադրերի երկարաժամկետ ռեզերվում միանգամյա գտնվելու առավելագույն ժամկետը լրանալը.

դ) ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելը:


IV. ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՌԵԶԵՐՎՈՒՄ ԳՐԱՆՅԵԼՈՒ ԵՎ ԿԱԴՐԵՐԻ ՌԵԶԵՐՎԻՑ ՀԱՆՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

13. Սույն կարգի 7-րդ և 11-րդ կետերում նշված անձնական գործը և համապատասխան փաստաթղթերը ստանալուց հետո տասնհինգօրյա ժամկետում Խորհուրդը կայացնում է որոշում, համապատասխանաբար՝ կադրերի կարճաժամկետ ռեզերվում և կադրերի երկարաժամկետ ռեզերվում տվյալ քաղաքացիական ծառայողին կամ անձին գրանցելու մասին:

14. Սույն կարգի 13-րդ կետում նշված որոշումն ընդունելուց հետո հնգօրյա ժամկետում լրացվում է գրանցման թերթիկ (հավելված): Գրանցման թերթիկը լրացվում է մեկ օրինակից, որը տրամադրվում է քաղաքացիական ծառայողին (անձին), իսկ պատճենը՝ պահվում է Խորհրդում:

15. Սույն կարգի 9-րդ և 12-րդ կետերով սահմանված հիմքերի ի հայտ գալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում Խորհուրդը կայացնում է որոշում կադրերի կարճաժամկետ ռեզերվից կամ կադրերի երկարաժամկետ ռեզերվից հանելու մասին:

16. Կադրերի ռեզերվում գրանցված անձը համարվում է կադրերի ռեզերվից հանված՝ նրա մահվան կապակցությամբ:



Հավելված
քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում
գրանցելու և կադրերի ռեզերվից հանելու կարգի

Գ Ր Ա Ն Ց Մ Ա Ն Թ Ե Ր Թ Ի Կ _____
(քաղաքացիական ծառայության կադրերի
ռեզերվի)

(երկարաժամկետ, կարճաժամկետ)

1. Ազգանուն, Անունը, Հայրանունը _____

2. Ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը _____

3. Անձնագիրը _____
(սնրիան, համարը, ում կողմից է տրվել և տրման ամսաթիվը)

4. Զբաղեցրած վերջին քաղաքացիական ծառայության շտաբը _____

(պաշտոնի անվանումը, ծածկագիրը)

5. Քաղաքացիական ծառայության
դասային աստիճանը _____

6. Կադրերի
ռեզերվում գրանցելու իմ քր _____

7. Կադրերի ռեզերվում գրանցելու վերաբերյալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական
ծառայության խորհրդի
որոշումը _____

8. Կադրերի ռեզերվում
գրանցման ժամանակաշրջանը*

« _____ » _____ թ. -ից մինչև

« _____ » _____ թ.

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՅԻՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ստորագրությունը